ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆԻ ՄՈՏ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-ԻՆ, ԺԱՄԸ 11:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ԳՈՐԾԱԿԱՐԳԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ

Մասնակցությամբ՝

- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար՝** **Արամ Հովհաննիսյանի**
- **Արմավիրի մարզպետի խորհրդական՝** **Բարսեղ Նիկողոսյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Մանվել Մելիքյանի**
- **Արմավիրի մարզպետի օգնական՝** **Նարեկ Խաչատրյանի**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարների**
- **Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ՝** **Տաթևիկ Մկրտչյանի**

Օ Ր Ա Կ Ա Ր Գ ՈՒ Մ՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետի մոտ 13.01.2025թ. և 20.01.2025թ. կայացած գործակարգավարական խորհրդակցությունների ընթացքում մարզպետի կողմից տրված հանձնարարականների կատարման ընթացքի և մարզում առկա մի շարք հրատապ խնդիրների քննարկում

Քննարկվեցին՝

Հարց 1. 2025 թվականի ընթացքում ՀՀ վարչապետին սահիկաշարի ձևաչափով ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից ներկայացվելիք հաշվետվության կազմման նպատակով պատասխանատուների մասնակցությամբ սույն թվականի հունվարի 24-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում կայացած աշխատանքային քննարկման արդյունքների հիման վրա սահիկաշարի և N 1 ձևաչափ-տեղեկանքի վերջնական տարբերակի լրամշակման ուղղությամբ տարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում

/Լիլիթ Մուշեղյան–ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ,
Տաթևիկ Մկրտչյան– ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ /

2025 թվականի ընթացքում ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից ՀՀ վարչապետին ներկայացվելիք հաշվետվության սահիկաշարի շարունակության մասի դիտարկման ընթացքում համապատասխան տեղեկատվությամբ և պարզաբանումներով հանդես եկան ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը, Ֆինանսական վարչության պետի պարտականությունները կատարող Արայիկ Հակոբյանը և Զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը:

Այնուհետև, օրակարգային առաջին հարցի կապակցությամբ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանը և Աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանը համապատասխան պարզաբանումներով մարզպետին ներկայացրեցին 2025 թվականի հունվարի 24–ին սահիկաշարի նախնական տարբերակի հետ կապված ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունում կայացած աշխատանքային քննարկման արդյունքների հիման վրա լրամշակված սահիկաշարի ամբողջական տարբերակի կազմման ուղղությամբ տարված աշխատանքների վերաբերյալ տեղեկատվություն, միաժամանակ նշելով, որ լրամշակման աշխատանքները, մինչև ՀՀ վարչապետի աշխատակազմ սահիկաշարի ներկայացնելը, դեռևս կշարունակվեն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ համատեղ:

Հանձնարարական՝

1. ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի զարգացման ծրագրերի մշակման և իրականացման բաժնի պետ Լիլիթ Մուշեղյանին և անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ Տաթևիկ Մկրտչյանին՝

ա/ապահովել ՀՀ վարչապետի մոտ 2025 թվականի ընթացքում նախատեսվող ՀՀ մարզպետների աշխատակազմերի 2024 թվականի հաշվետվությունների ներկայացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի ղեկավարի 2025 թվականի հունվարի 8-ի N 02/12.63/349-2025 հանձնարարականի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2025 թվականի հունվարի 9-ի N ԴԽ/15.2/537-2025 գրության պահանջների ամբողջական կատարումը և համապատասխան ձևաչափով սահիկաշարի ու N 1 ձևաչափ-տեղեկանքի լրամշակված տարբերակը ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ներկայացնել 2025 թվականի հունվարի 27–ին:

բ/ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ սահիկաշարի կազմման նպատակով համատեղ կատարված լրամշակման աշխատանքների ավարտից հետո, ամբողջական և վերջնական տարբերակը ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ՝ հունվարի 31–ին:

գ/ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ սահիկաշարի կազմման նպատակով համատեղ կատարվող լրամշակման աշխատանքների ընթացքի և արդյունքների վերաբերյալ պարբերաբար տեղեկատվություն ներկայացնել ՀՀ Արմավիրի մարզպետին:

2. Սույն հանձնարարականի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Արամ Հովհաննիսյանին:

Հարց 2. ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքում 2024 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում իրականացված իրավական հսկողության աշխատանքների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկատվության ներկայացում

/ Լիաննա Հարությունյան – Հ Հ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի
իրավաբանական բաժնի պետ,
Գոռ Հովհաննիսյան-
Հ Հ Արմավիրի մարզպետի աշխատակազմի
տարածքային կառավարման և տեղական
ինքնակառավարման հարցերի վարչության պետ /

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկած ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանը և Աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը նշեցին, որ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2025 թվականի հունվարի 20–ի N 0084 գրությամբ և համապատասխան բացատրություններով ՀՀ Արմավիրի մարզպետին ներկայացված տեղեկատվության համաձայն Փարաքար համայնքում 2024 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում իրականացված իրավական հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման ուղղությամբ ձեռնարկված միջոցառումների արդյունքում՝

1) 19.04.2023 թ.-ին փոխանցվել է Ֆլեշ ՍՊԸ-ին 3768,0 հազ. դրամ և ձեռք է բերվել 12000 լիտր ռեգուլյար մակնիշի բենզին, որոնց իրացման մասով չի կազմվել երթուղային թերթիկներ կամ խախտվել է ֆինանսների նախարարի 01.02.2016թ. N 37-ն հրամանի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված հավելվածի <<Մարդատար ավտոմեքենայի, ոչ ընդհանուր օգտագործման երթուղային թերթիկի (ձև Ծխ-6)>> պահանջները: Չկա նաև համայնքի ղեկավարի կողմից ընդունված որոշում կամ հրաման վառելիքի բաշխման մասով:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

2023թվականի 19.04.2023թ-ին ձեռք է բերվել Ֆլեշ ՍՊԸ-ից 12000.0 լիտր ռեգուլյար տեսակի բենզին, որի իրացման մասով առկա է գրանցամատյան, որտեղ գրանցվել է համապատասխան ելքագրումները, սակայն չկան համայնքի ղեկավարի որոշում վառելիքի բաշխման վերաբերյալ և երթուղային թերթիկներ:

2) 2023թ.-ի բյուջեի վերահսկողություն չի իրականացվել ավագանու կամ այլ (աուդիտի) կողմից:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվում է իրականացնել առաջիկայում:

3) Խախտվել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. գնումների գործընթացի կազմակերպման մասին N 526-Ն որոշման 16-րդ կետի պահանջները, այն է գնման գործընթացը սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում: Մասնավորապես առանց գնումների պլանում ներգրավվելու ձեռք են բերվել հետևյալ ապրանքները՝

1. 26.06.2024թ. ԱՁ <<Էդգար Հովսեփյան>> 170000 դրամ փական սողնակավոր,

2. 09.06.2023թ. ԱՁ <<Միլենա Մանուկյան>> 1*280000 =280000 դրամ ջրի պոմպ,

3. 30.06.2023թ. փոխանցվել է <<ԱԳՍՄ>> ՍՊԸ-ին 540000 դրամ (18*30000) համայնքի ցուցանակ,

4. 27.06.2023թ. <<Վահրամ Արշակյան>> 713180 դրամ եվրոդռներ և պատուհաններ,

5. 14.07.2023թ. <<Մաքսալեքս>> ՍՊԸ-ին 225000 դրամ (9*25000) դրոշ, պատվանդան,

6. 14.07.2023թ. <<Արտաշես Եսայան>> ԱՁ-ին 504000 դրամ լեդ էկրանի տեղադրում և սպասարկում,

7. 15.07.2023թ. փոխանցվել է <<Ֆելիքս Դադիկյան>> ԱՁ-ին 564500 դրամ տպագրական ծառայություններ,

8. 17.07.2023 թ. փոխանցվել է <<Տեսլագեն>> ՍՊԸ-ին 300000 տրանսֆորմատորի ենթակայության բաժանիչ,

9. 06.12.2023թ. փոխանցվել է 528500 դրամ <<ՄՏԿ>> ՓԲԸ-ին գազի ջրատարի փականի համար,

10. 07.12.2023թ. փոխանցվել է 251000 դրամ <<Լանս>> ՍՊԸ-ին սերվերային պահարանի համար, <<Վարդուհի Հեպոյան>> ԱՁ-ին 343000 դրամ ծաղիկների համար:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկացվել է գնումների համակարգողին:

4)25.12.2023թ. համայնքի ղեկավարի տեղակալ Կ.Արթենյանի կողմից գրվել է զեկուցագիր, ըստ որի համայնքի թվով 11 ավագանիներ պարգևատրվել են 55000 դրամ արժողությամբ նվեր քարտերով, որոնց մասով չկա համայնքի ղեկավարի համապատասխան որոշում, չկա ավագանիների ցանկը և բաշխման ցուցակը ըստ ստացողների, քանի որ ավագանիների ցանկը 21-ն է:

ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2022 թվականից ի վեր ավագանու նիստերին մշտական մասնակցություն են ունեցել <<Դավիթ Մինասյան>> դաշինքի թվով 5 ավագանիները և <<Քաղաքացիական Պայմանագիր>> կուսակցության թվով 6 ավագանիները, համայնքի ղեկավարի տեղակալի զեկուցագրի հիման վրա ձեռք են բերվել նիստերին մշտապես ներկա գտնվող ավագանու անդամներին նվեր քարտեր և որպես Ամանորյա նվեր հանձնվել է թվով 11 ավագանու անդամներին: Քանի որ քարտերը նվերներ են եղել չեն տրամադրել բաշխման ցուցակ ըստ ստացողների և չկա նման փաստաթուղթ:

Օրակարգային երկրորդ հարցի կապակցությամբ տեղեկատվությամբ հանդես եկած ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանը և Աշխատակազմի տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանը նշեցին նաև, որ ՀՀ Արմավիրի մարզպետի 2025 թվականի հունվարի 22–ի N 01/13/00473-2025 գրությամբ ՀՀ Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի պաշտոնակատարի 2025 թվականի հունվարի 20–ի N 0084 գրությունը և հիմքերն ուղարկվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն:

Միաժամանակ նշվեց, որ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից Բաղրամյան համայնքում կատարված իրավական հսկողության արդյունքների վերաբերյալ որևէ դիրքորոշում դեռևս չի ստացվել:

ՀՀ Արմավիրի մարզպետը ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Լիաննա Հարությունյանի և Աշխատակազմի տարածքային

կառավարման և տեղական ինքնակառավարման հարցերի վարչության պետ Գոռ Հովհաննիսյանի ներկայացրած տեղեկատվությունն ընդունեց ի գիտություն:

Օրակարգային հարցերի քննարկումից հետո, ՀՀ Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը մարզում հրատապ կարևոր հարցերից մեկին անդրադառնալու անհրաժեշտությունից ելնելով, ներքոհիշյալ հանձնարարականը տվեց՝ ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության և ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Դավիթ Ավետիսյանին՝ նախապատրաստել ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեին ՀՀ Արմավիրի մարզպետի աշխատակազմի ենթակայությամբ գործող հանրակրթական ուսումնական հաստատությունների կողմից անշարժ գույքի հանձնման գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն և այն ներկայացնել 2025 թվականի փետրվարի 3–ին կայանալիք գործակարգավարական խորհրդակցության ժամանակ:

Օրակարգային հարցերի քննարկմամբ և ամփոփմամբ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Արգիշտի Մեխակյանը խորհրդակցությունը հայտարարեց ավարտված:

2025-01-29 12:44:23 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝ ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

Արձանագրող՝ ՀՀ Արմավիրի մարզպետի
աշխատակազմի անձնակազմի կառավարման,
փաստաթղթաշրջանառության և հասարակայնության
հետ կապերի վարչության պետ՝ Դավիթ Դավթյան